

**ԵՐԵՎԱՆԻ**  
**«ԵՐԵՎԱԿ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**  
**2023-2024**  
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ**  
**ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

ք. Երևան  
2024թ.

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

## Մ Ա Ս 1

Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը, համարը`	«Երևակ» կրթահամալիր
Հաստատության հասցեն`	Անդրանիկի 4
Հաստատության հեռախոսահամարը`	(098) 50-25-25
Հաստատության էլեկտրոնային հասցեն`	info@yerevakkrt.am
Հաստատության ինտերնետային կայքի հասցեն է`	www.yerevakkrt.am

Կրթահամալիրն ունի ուսումնադաստիարակչական գործունեության իր ռազմավարությունը:

**«Այսօրվա հիմնավոր կրթությունը վաղվա բարեկեցությունն է»:**

«Երևակ» կրթահամալիրի նպատակն է երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար ստեղծել նպաստավոր ու անհրաժեշտ պայմաններ և դաստիարակել բազմակողմանի զարգացած, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատներ, ապահովել այնպիսի կրթություն, որը հնարավորություն կտա մեր քաղաքացուն լինել ազատ և առողջ : Կրթահամալիրը մի ջերմ և հյուրընկալ մոլորակ է, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կարողանում է լիարժեք դրսևորվել և զարգացնել իր կարողությունները:

Կրթահամալիրի խորհրդանշանը.



Հ/հ	Ուսումնասիրության ոլորտ	Գնահատման արդյունք		Աշխատանքի նկարագիր
		թիվ	%	
1	2	3	4	5
1	Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռք բերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը.			2023-2024 ուստարում իրականացվել է չափորոշչախեն ուսուցում՝ համաձայն ուսպլանի: Ուսումնական գործընթացը մեկնարկել է 2023թ. սեպտեմբերի 1-ին՝ առկա ուսուցմամբ: Տարեսկզբին ուսուցիչներն ապահովվել են առարկայական ծրագրերով, հաստատվել են առարկայական թեմատիկ պլանները, տրվել են ուսումնաօժանդակ նյութեր, աշակերտները մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ապահովվել են դասագրքերով, բացառությամբ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների, որտեղ ուսումնական գործընթացը կազմակերպվում էր Հանրակրթության պետական չափորոշի/ՀՀՀ կառավարության 2021թ.-ի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում/ և առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջների հիման վրա: Այդ դասարանների դասագրքերը աշակերտներին տրվել են 1-ին կիսամյակի ընթացքում: Ուսումնամեթոդական, ներդպրոցական և համադպրոցական աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետում, ուսման որակի ապահովման նպատակով վերահսկողություն է սահմանվել առարկայական դրվածքի ուսումնասիրմամբ, դասալսումների իրականացմամբ, տնօրենության կողմից գրավոր աշխատանքների անցկացմամբ, իրականացվել է մշտադիտարկում բոլոր դասարաններում, դասերը հագեցված են եղել դիդակտիկ պարագաներով, կիրառվել են ՏՀՏ միջոցներ, լաբորատոր և գործնական աշխատանքներն անցկացվել են սահմանված կարգի համաձայն, ֆիզկուլտուրայի դասերը հիմնականում անցկացվել են բացօթյա տարածքներում և սպորտային մար-

			<p>զասրահում՝ շեշտը դնելով անհատական վարժությունների վրա: 1 դասարանների աշակերտների ուսումնական գործընթացը կազմակերպվել է համաձայն ուսպլանի պահանջների: 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրմամբ պայմանավորված մշտապես կատարվել են դասալսումներ, աջակցություն է ցուցաբերվել թե՛ աշակերտներին նախագծային աշխատանքներն իրականացնելու և թե՛ ուսուցիչներին: Աշակերտների արժեհամակարգի ձևավորման նպատակով իրականացվել են հետազոտական, նախագծային աշխատանքներ, խաղ-մրցույթներ, հրապարակային դասեր, միջոցառումներ, հայրենասիրությանը նվիրված դասեր ու միջոցառումներ, արտադարձական միջոցառումներ և այցեր մշակութային օջախներ, վարպետաց դասեր, բանավեճի ակումբ, ճանաչողական էքսկուրսիաներ:</p>
--	--	--	--

1	2	3	4	5
2	9-րդ և 12-րդ դասավարտական պետական ավարտական քննություններից «18», «19» և «20» գնահատականներ ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը.	10	37%	
3	Պետական ավարտական քննություններից անբավարար գնահատական ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը.	-	-	
4	Պետական միասնական քննություններին մասնակցած շրջանավարտների թիվը և տոկոսը.	7	54%	
5	Հայոց լեզվից բարձր («8», «9» և «10») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների`	40	75%	4-րդ, 9-րդ, 12-րդ դասարանների (8-9-10) տարեկան գնահատականները
	IV դասարան	23	88%	
	IX դասարան	8	57%	
	XII դասարան	9	69%	
6	Հայոց լեզվից անբավարար («1», «2» և «3») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների`	-	-	
	IV դասարան	-	-	
	IX դասարան	-	-	
	XII դասարան	-	-	
7	Մաթեմատիկայից բարձր («8», «9» և «10») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների`	38	72%	
	IV դասարան	20	77%	
	IX դասարան	8	57%	
	XII դասարան	10	77%	
8	Մաթեմատիկայից անբավարար («1», «2» և «3») տարեկան գնահատականներ ստացած սովորողների թիվը և տոկոսն ըստ հանրակրթական ծրագրերի աստիճանների.	-	-	
	IV դասարան	-	-	
	IX դասարան	-	-	
	XII դասարան	-	-	
9	Հանրակրթական ծրագրերի երկրորդ աստիճանը ավարտած և ամփոփիչ ատեստավորման արդյունքում վկայական ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը:	14	100%	

1	2	3	4	5
10	«Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը:	1	7%	
11	Գերազանցության մեդալակիրների թիվը և տոկոսը:	-	-	
12	Հանրակրթական ծրագրերի երրորդ աստիճանը ավարտած և ամփոփիչ ատեստավորման արդյունքում ատեստատ ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը:	13	100%	
13	Հանրապետական, միջազգային, համաշխարհային օլիմպիադաներին մասնակցած և մրցանակներ, խրախուսանքներ ստացած սովորողների թիվը և տոկոսը:	2	0,68%	
14	Համայնքային, մարզային, հանրապետական, միջազգային մրցույթներին, տարբեր միջոցառումներին սովորողների և ուսուցիչների ընդգրկվածությունը, մասնակիցների թիվը:	86	29%	Մասնակցություն ասմունքի, կերպարվեստի, երգ ու պարի փառատոների, ռոբոտաշինության, շախմատի մրցումներին:
15	Սովորողների կողմից օրինակելի վարքագծի դրսևորումը, իրավախախտումներից զերծ մնալը:	294	100%	Սովորողների կողմից պահպանվել են ներքին կարգապահական կանոնները. ներկայացել են դպրոց գրեթե առանց ուշացումների, բարեհամբույր և հարգալից են եղել ուսուցիչների և միմյանց նկատմամբ: 2023-2024 ուստարում ուսուցիչների, աշակերտների և ԱԽ անդամների կողմից իրականացվել է ներդպրոցական վերահսկողություն, աշակերտները ծանոթացել են ճանապարհային երթևեկության և տարհանման կանոններին:
16	Արտադասարանական աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը և տոկոսը, աշխատանքների արդյունավետությունը:	290	78%	Աշակերտները մասնակցել են շաբաթօրյակների, էքսկուրսիաների, սպորտային միջոցառումների, շախմատի մրցումների, այցելել են թանգարաններ, մշակութային օջախներ:
17	Արտադպրոցական կրթությանը մասնակցած սովորողների թիվը և տոկոսը:	195	66%	Ջգալի թիվ են կազմում արտադպրոցական կրթություն ստացող աշակերտները, որոնք հաճախում են երգի, պարի, կերպարվեստի, սպորտային խմբակներ:
18	Առաջին դասարանցիների՝ ուսումնառությանը հարմարվածության մակարդակը.	33	100 %	Առաջին դասարանի աշակերտներն առաջին իսկ շաբաթվա ընթացքում հարմարվել են դպրոցին, ներքին կարգապահական կանոններին, սոցիալական նոր կարգավիճակին: Բոլորը յուրացրել են ուսումնական նյութը:
19	Հանրակրթական ծրագրերի առաջին աստիճանից երկրորդ աստիճան փոխադրված (տեղափոխված) սովորողների առաջադիմությունը և նոր կրթական աստիճանին նրանց հարմարվածության մակարդակը.	21	100%	Հանրակրթական ծրագրերի առաջին աստիճանից երկրորդ աստիճան փոխադրված աշակերտների առաջադիմությունը կազմել է 100%:

1	2	3	4	5
20	Հանրակրթական ծրագրերի երկրորդ աստիճանից երրորդ աստիճան փոխադրված (տեղափոխված) սովորողների առաջադիմությունը և նոր կրթական աստիճանին նրանց հարմարվածության մակարդակը.	20	100 %	2023-2024 ուստարում դպրոցի IX դասարանն ավարտել է 14 աշակերտ:
21	Սովորողների՝ առանձին առարկաների գծով ինքնուրույն կրթական ձեռքբերումները:	60	20 %	Դպրոցի մի շարք աշակերտներ մասնակցել են տարբեր մրցույթների և գրավել մրցանակային տեղեր: Առարկայական օլիմպիադաներում ունեցել են ձեռքբերումներ:
22	Օլիմպիադաների, մրցույթների, ստեղծագործական հաշվետվությունների անցկացումը ուսումնական հաստատության կողմից:	60	21%	<p>Համապատասխան աշխատանքային պլանի՝ դպրոցում անցկացվում են առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ, որոնց վերաբերյալ ներկայացվում են հաշվետվություններ առարկայական մ/մ նախագահների և ուսմասվարների կողմից ինչպես նաև մ/մ և մանկխորհրդի նիստերին: Արդյունքները ներկայացվում են ծնողներին:</p> <p>Դպրոցականների առարկայական օլիմպիադաներին մասնակցել է 28 աշակերտ, 7-ը՝ տարածքային փուլին, իսկ 5-ը՝ քաղաքային փուլին: Ներդպրոցական առցանց օլիմպիադային մաթեմատիկա, աշխարհագրություն, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, ինֆորմատիկա առարկաներից մասնակցել է 32 աշակերտ: 5 աշակերտ մասնակցել է կենսաբանության մարզային փուլին, 1 աշակերտ՝ քիմիայի: Կենսաբանությունից մարզային փուլում 1 աշակերտ՝ Սամվել Աբրահամյանը, արժանացել է 3-րդ կարգի դիպլոմի: Հանրապետական փուլ են անցել 2 աշակերտ՝ Սամվել Աբրահամյանը և Գեղեցիկ Ջանիբեկյանը /10-րդ դաս./: Սամվել Աբրահամյանը քիմիայից և կենսաբանությունից արժանացել է գովասանագրի: Դպրոցում պարբերաբար անցկացվել են առարկայական խաղմրցույթներ, վայել չազրության, ընթերցանության մրցույթներ, որոնց ընթացքում աշակերտները ձեռք են բերել նոր գիտելիքներ, ստացել խրախուսական պատվոգրեր: Դպրոցը ունի առանձին կայք, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջեր, որտեղ ողջ տարվա ընթացքում հրապարակվում են կատարվելիք և կատարված իրադարձությունները, միջոցառումները:</p>

1	2	3	4	5
23	Հայրենագիտական ճամփորդությունների, արշավների, մշակութային օջախներ այցելությունների կազմակերպումը, հաճախականությունը:	290	89%	<p>Տարվա ընթացքում աշակերտները այցելել են մշակութային օջախներ, թանգարաններ, կինոթատրոններ, արվեստի օջախներ:</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Լևոն պապի գետնափոր քարանձավ-թանգարան</li> <li>➤ Օրբելի եղբայրների տուն-թանգարան</li> <li>➤ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան</li> <li>➤ ՀովիՇիրազ տուն-թանգարաններ</li> <li>➤ Ավ.Իսահակյանի տուն-թանգարան</li> <li>➤ Վ.Համբարձումյանի տուն-թանգարան</li> <li>➤ «Հայաստանի պատմության թանգարան»,</li> <li>➤ Երևան քաղաքի պատմության թանգարան</li> <li>➤ Խնկո Ապրոզ գրադարան</li> <li>➤ «Ժողովրդական արվեստների թանգարան»,</li> <li>➤ Մատենադարան,</li> <li>➤ «Կենդանաբանական այգի»</li> <li>➤ Երևանի կամերային թատրոն</li> <li>➤ Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն</li> <li>➤ Բուսաբանական այգի</li> <li>➤ Գառնի-Գեղարդ</li> <li>➤ Օջական</li> <li>➤ Բյուրականի աստղադիտարան</li> <li>➤ Ամբերդ</li> <li>➤ Գոշավանք</li> <li>➤ Հաղարծին</li> <li>➤ Սարդարապատ</li> <li>➤ «Գաֆէսճեան» արվեստի կենտրոն,</li> <li>➤ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն,</li> <li>➤ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն ՊՈԱԿ</li> <li>➤ «Շանթ» պաղպաղակի գործարան,</li> <li>➤ «Տեխնոլաբ»</li> <li>➤ Ջանգակ հրատարակչություն</li> </ul>



1	2	3	4	5
24	Ներքին գնահատման հաշվետվության քննարկման արդյունքում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի լրամշակմանն ուղղված որոշումների կայացումը:			Մանկավարժական խորհրդի նիստին առաջարկվել է կրտսեր, միջին, ավագ դպրոցների ուսուցիչների համագործակցության սերտացում, նոր միջոցների կիրառում, որոնք նպաստել են աշակերտների կրթական առաջին աստիճանից 2-րդ աստիճանի, 2-րդ աստիճանից 3-րդ-ի անցման արդյունավետությունը բարձրացնելուն:
25	Սովորողների և ուսուցիչների առողջության պահպանումը, սննդի, հանգստի, աշխատանքի կազմակերպումը:			Դպրոցում ուսուցիչների աշխատանքի, ինչպես նաև նրանց և աշակերտների հանգստի կազմակերպման համար ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ, կազմակերպվել այցելություններ կրթական և մշակութային միջավայրեր, թատրոններ, ցերեկույթներ: Դպրոցում առկա են բուժկետ, բուֆետ, ուսուցչանոց, հարմարավետ դասասենյակներ՝ անհրաժեշտ գույքով, ուսուցիչները մասնակցել են սպորտային միջոցառումների, պարբերաբար կազմակերպվել են սպորտային մրցույթներ ուսուցիչների և աշակերտների միջև (վոլեյբոլ, բասկետբոլ):
26	Մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների աշխատանքի արդյունավետությունը:	80	100%	<p>Դպրոցում աշխատանքների կազմակերպմանը մասնակցել են նաև ծնողական և ԱԽ-ը. համագործակցության արդյունքում բարձրացել է դպրոցի աշխատանքի արդյունավետությունը.</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ ԱԽ-ն ապահովում է սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ միջավայր</li> <li>➤ ԱԽ-ի կողմից աշակերտների իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ իրազեկում</li> <li>➤ Կազմակերպել է «Հուտ աստղ: Դավիթ-Բեկ» ֆիլմի դիտում և քննարկում</li> <li>➤ Կազմակերպել է Վարդան Գրիգորյանի «Հավերժական վերադարձ» գրքի քննարկում</li> <li>➤ Կազմակերպել է Դերենիկ Դեմերձյանի «Հայր» ստեղծագործության քննարում</li> <li>➤ «Ես մեդիագրագետ եմ» հանրապետական նախագծին մասնակցություն. «Կեղծ լուրեր» և «Պրոպագանդա», բանավեճեր, հետազոտություններ, քննարկումներ</li> </ul>

			<ul style="list-style-type: none"> <li>➤ ԱԽ մասնակցությունը ԿԳՄՍ նախարարության կողմից հայտարարված «Համահայկական դպրոցական մրցույթին»՝ նվիրված Սերգեյ Փարաջանովի 100 և Արամ Խաչատրյանի 120-ամյակներին: Ուսումնասիրված նյութերի հիման վրա Ա.Գրիգորյանը և Գ.Զանիբեկյանը գրել են սցենար, ոգեշնչվելով Ա.Խաչատրյանի երաժշտությամբ և Ս.Փարաջանովի ստեղծագործական ոճով պատրաստել անհնացիոն ֆիլմ՝ «Արվեստի երանգներով» խորագրով և արժանացել մրցանակի</li> <li>➤ Մասնակցություն «Ձևափոխվող կրթություն» կրթական հիմնադրամի և Նորավանի միջնակարգ դպրոցի ԱԽ հայտարարած ասմունքի մրցույթին՝ նվիրված Պարույր Սևակի 100 – ամյակին</li> <li>➤ ԱԽ անդամների մասնակցություն «ՌՈՒԱՆ» մանկապատանեկան ֆիլմերի փառատոնին</li> <li>➤ Արմինե Անդայի կազմակերպած «Հայ-ֆրանսիական հեքիաթասացության» մրցույթի մասնակցություն: Կրթահամալիրի սաներ Ա.Ներսիսյանը և Ժ.Ղարիբյանը արժանացան «Ամենալավ հայկական հեքիաթ» և «Ամենալավ ֆրանսիական հեքիաթ» անվանակարգերի մրցանակների</li> <li>➤ ԱԽ նախագահ Գ. Զանիբեկյանը, ԱԽ անդամ Գ.Զանիբեկյանը, կրթահամալիրի սաներից՝ Ռ.Սարգսյանն ու Է.Մեարոսյանն աչքի են ընկել նաև կամավորական աշխատանքներում:</li> <li>➤ ԱԽ մասնակցություն հունգարացի ռեժիսորներ Նանդոր Գրոշի և Էսթեր Մալնասի կազմակերպած աշխատարարին: Մասնագետների հետ համատեղ աշխատելով՝ երևակցիները իրենց պատմության հիման վրա ստեղծեցին «Կյանքի իմաստը» ֆիլմը</li> <li>➤ ԱԽ-ի «Իմ սիրելի ուսուցիչ» համադպրոցական քվեարկության կազմակերպում:</li> <li>➤ ԱԽ-ի ակտիվ մասնակցություն ամենամյա ամանորյա միջոցառման ծրագրին</li> <li>➤ ԱԽ անդամների ակտիվ մաս-</li> </ul>
--	--	--	---

				<p>նակցություն սպորտային տարբեր միջոցառումներին</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Աև անդամների ակտիվ մասնակցություն Հ.Թումանյանի 155 ամյակի կապակցությամբ դպրոցում հայտարարված «Թումանյանական շաբաթ»-ին: Հ.Թումանյանի հեքիաթների ընթերցումներ և նույն հեքիաթների մոտիվների հիման վրա մուլտֆիլմերի դիտումներ և քննարկումներ կրթահամալիրի մանկապարտեզում և տարրական դպրոցում</li> <li>➤ Աև մասնակցությունը AESA 23-րդ Գիտական օլիմպիադային, ԱՅԲ հիմնադրամի և Գյումրու «Ֆոտոն» վարժարանի կազմակերպած Գիտության փառատոնին:</li> <li>➤ Աև -ի կողմից «Սովորում ենք բնության գրկում» ծրագրի մասնակցություն, ուսումնական դասընթացներ բնության գրկում</li> <li>➤ «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի շրջանակներում տարբեր ոլորտի մասնագետների հետ հանդիպումների կազմակերպում</li> <li>➤ Մասնակցություն ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության «Պատանի հրշեջ-փրկարարական» մարզաձևի առաջ նույնիսկ:</li> <li>➤ Աև ակտիվ մասնակցություն տարիանման գործընթացի կազմակերպմանը «Երկրաշարժ» թեմայով</li> <li>➤ Թանգարանների միջազգային օրվան ընդառաջ այցեր տարբեր թանգարաններ:</li> <li>➤ Թեմատիկ տարբեր միջոցառումներին Աև անդամների մասնակցություն:</li> </ul>
27	Ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը, կրթության որակի ապահովմանն ուղղված նրանց նորարարական գործունեությունը.:	32	89%	Ուսուցիչներն ունեն մասնագիտական համապատասխան պատրաստվածություն. դասերին օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիաներ: Ուսուցիչները հանդես են գալիս հոդվածներով, սեմինարներով, մանկավարժական ընթերցումներով:

		<p>Մասնակցել են Կրթության Ազգային Ինստիտուտի, ԿՏԱԿ-ի, ԿՁՆԱԿ-ի, կողմից կազմակերպված ՀՊԶ-ի վերապատրաստումներին, PH International հայկական մասնաճյուղի ներկայացուցիչներ Ալեքսանդր Շագաֆյանի և Լիլիա Խաչատրյանի կողմից իրականացվող նախագծային ուսուցման վերապատրաստմանը, որի արդյունքում 7-րդ դասարանի բոլոր աշակերտները առանց մեծ դժվարությունների կարողացան ներկայացնել իրենց հետազոտական նախագծային աշխատանքները: Օտար լեզվի մասնախմբի ուսուցիչները համագործակցում են «Pearson» - Միացյալ Թագավորությունում միջազգային կազմակերպության հետորի ընթացքում մասնակցել են «English Curriculum Reform: Empowering the Next Generation of Global Citizens in Armenia» թեմայով վերապատրաստմանը: Մասնակցել են Ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպված «Brain Friendly Grammer», «Mastering Motivation Mechanisms» թեմայով վերապատրաստմանը: Ուսուցիչները մասնակցել են «Ձևափոխվող կրթություն» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մեթոդների ընտրությունը դասը պլանավորելիս», «Խաչվող հասկացություններ», «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչների 21-րդ դարի հմտությունների խթանում» թեմայով վերապատրաստման դասընթացներին, «ՈՍ կրթական արհեստանոց» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպած «Ռեսուրսների կառավարում» թեմայով վերապատրաստմանը, Երևանում «Դոմ Մասկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի կողմից կազմակերպված «ՀՀ-ում ռուսաց և գրականության ուսուցիչների որակավորման բարձրացման» ծրագրին և ստացել կրեդիտներ: Վերապատրաստված ուսուցիչները նույնպես հանդես են գալիս նոր մեթոդների փորձի փոխանակմամբ:</p>
--	--	--

1	2	3	4	5
28	Ուսուցիչների մասնակցությունը «Տարվա լավագույն ուսուցիչ» կամ այլ մրցույթների:	-	-	
29	Որակավորման տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորված ուսուցիչների թիվը և տոկոսը:	2	6%	Մանկավարժներին առաջարկվել է քայլեր ձեռնարկել ատեստավորման նպատակով:
30	Ուսուցման նպաստավոր պայմանները, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական ապահովվածությունը:			Տարրական դասարանների դասասենյակները գտնվում են դպրոցի առաջին հարկում: Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, էլեկտրոնային գրատախտակ, բոլոր դասարաններում առկա են պրոյեկտորներ: Դպրոցում առկա են քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, ժամանակակից կահավորմամբ և վերանորոգված լաբորատորիաներ, ինֆորմատիկայի դասասենյակ(աշակերտների թվով համակարգիչներ), ուսումնամեթոդական նյութեր առանձին առարկաների դասավանդման համար, տեխնոլոգիայի դասասենյակ, նկար-չության արվեստանոց, սպորտային դահլիճ և անհրաժեշտ գույք:
31	Ուսումնանյութական միջավայրի անվտանգության ապահովումը:			Դպրոցում անվտանգության համար պատասխանատու են օրվա հերթապահ ուսուցիչները: Աշակերտները նախապես ծանոթանում են լաբորատորիաների և արհեստանոցների տեխնիկայի կիրառման անվտանգության կանոններին, որոնք փակցված են բոլոր լաբորատորիաներում:
32	Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների առկայությունը և կիրառման արդյունավետությունը:			Դպրոցն ապահովված է S<S միջոցներով. դասերը հիմնականում անցկացվում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:
33	Ձեռնարկատիրական գործունեության, լրացուցիչ կրթական ծառայությունների առկայությունը, դրանց արդյունավետությունը:			Դասերից հետո գործում են կերպարվեստի, պարի, կարատեի, ռեփուտաշինության, խմբակներ:
34	Բյուջետային ֆինանսավորման և ծախսերի արդյունավետության վերլուծությունը:			
35	Ուսումնական հաստատության կառավարման և ֆինանսավորման հարցերում համայնքի ներկայացուցիչներին ներգրավելը:	-	-	Դպրոցի ֆինանսական գործունեությանը որևէ այլ կառույց չի մասնակցել: Հիմնական ծախսերը կատարվել են աշակերտների ուսման վճարների և հիմնադրուների ներդրումներից:
36	Ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտակենտրոն մոտեցման ապահովումը՝ ուսուցման ավանդական և արդիական մեթոդների ներդաշնակ համադրմամբ:			Այս ուղղությամբ ուսուցիչների համար հաճախակի են անցկացվել սեմինար-գործ. պարապմունքներ՝ արդիական մեթոդների տեղայնացման, կիրառման նպատակով: Աշակերտակենտրոն ուսուցումը լավագույնս իրականացվում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

1	2	3	4	5
37	<p>Ուսուցման նպատակաուղղվածությունը շրջանավարտի պահանջների բավարարմանը՝ ինչպես մասնագիտական կողմնորոշման, աշխատանքի անցնելու, այնպես էլ կրթությունը շարունակելու առումով:</p>			<p>10-12-րդ դասարաններում անցկացվել են մասնագիտական կողմնորոշման դասեր, պարբերաբար կազմակերպվել են դաս-բանավեճեր, «էքսկուրս» մասնագիտությունների աշխարհում/ԱԻՆ, Երկիր Մեդիա/, 19 պոլիկլինիկա՝ ակնաբուժական բաժանմունք, թիվ 2 կլինիկական հիվանդանոցի նյարդաբանական բաժանմունք, ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան, հանդիպում դատավոր Ժորա Չիչոյանի հետ, հանդիպումներ ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական կազմի հետ, տարվել են աշխատանքներ մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստման համար:</p> <p>Հանդիպումներ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հունգարացի կինեռեժիսոր Նանդոր Գրոշի և մոնտաժային աշխատանքների ղեկավար Էսթեր Մալնասի հետ:</li> <li>• Ալֆանյուզ լրատվավերլուծական կայքի հիմնադիր, մեդիափորձագետ Տիգրան Քոչարյանի հետ:</li> <li>• ՀՀ ՆԳՆ ՓԾ հոգեբանական աջակցության բաժնի հոգեբան Հասմիկ Ղուշչյանի հետ:</li> <li>• Պարույր Սևակ թանգարանի տնօրեն, գրականագետ Սևակ Ղազարյանի հետ:</li> <li>• սեմինար-քննարկում Edunetwork կազմակերպության խոսնակների՝ Վարշավայի համալսարանի ներկայացուցիչների հետ:</li> <li>• ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Մալխասյանի հետ:</li> <li>• Հանդիպում «ՍՄԱՐԹ ՉՈՅՍ» լեզուների ուսուցման մասնագիտացված կենտրոնի ներկայացուցիչների հետ:</li> <li>• Բժիշկ-սրտաբան, Երևանի շտապօգնության</li> </ul>

				<p>սրտաբանական և թերապևտիկ ծառայությունների գլխավոր մասնագետ, ԵՊԲՀ-ի շտապօգնության և աղետների բժշկության ամբիոնի դասախոս Անուշավան Կիրաբյանի հետ:</p> <ul style="list-style-type: none"> <li>«Էկո գրագիտություն և թղթե թափոնների վերամշակում» թեմայով իրազեկման հանդիպում:</li> </ul>
38	Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծմանը սովորողների գործուն մասնակցության առկայությունը, նրանց ներգրավվածությունը դպրոցի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներին:	294	100%	Աշակերտները մշտապես ներգրավվել են շաբաթօրյակներին, ծառատունկերին, կանաչապատման աշխատանքներին:
39	Դպրոցահասակ երեխաներին ուսումնառության մեջ ընդգրկելու, նրանց վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու, մշակելու աշխատանքների իրականացումը:			Ետ մնացող աշակերտներին ուսումնառության մեջ ընդգրկելու ուղղությամբ համատեղ աշխատանքներ են ծավալվել դպրոցի տնօրենի, փոխտնօրենների, դասավանդող ուսուցիչների, դասղեկների և ծնողների կողմից: Իրականացվել են կամավորական աշխատանքներ լավ սովորողների կողմից:
40	Սեռային (գենդերային) հավասարության ապահովմանը և համայնքում ապրող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների՝ կրթությունից դուրս չմնալուն ուղղված ջանքերի դրսևորումը:			Դպրոցում ԱԽ կազմում աշակերտները ընտրվել են սեռային հավասարությամբ: Չկան կրթվել չցանկացող աշակերտներ:

1	2	3	4	5
41	Դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, ուսումնական հաստատության մատչելի և հասանելի լինելը:			Դպրոցում ստեղծվել են բոլոր անհրաժեշտ և բավարար պայմանները: Այլազգի աշակերտների համար չկա որևէ խտրականություն:
42	Կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջներին ուսումնական հաստատության կանոնադրության համապատասխանությունը:			Ուսումնական հաստատության կանոնադրությունը համապատասխանում է կրթության բնագավառը կարգավորող օրենսդրական պահանջներին:
43	Պետական ուսումնական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շենքերի (գույքի) խնամքով շահագործումը և պահպանումը:			Դպրոցը վարձակալել է Սիամանթյի անվան թիվ 162 հիմնական դպրոցի տարածքը, որը օգտագործվել է խնամքով, հիմնադիրների կողմից կատարվել են վերանորոգումներ, թարմացվել է գույքը:
44	Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների առկայությունը, սահմանված վարքագծի կանոնների պահանջների կատարումը (աշխատողներ և սովորողներ):			Դպրոցում գործում են ներքին կարգապահական կանոններ, որի պահանջների կատարմանը հետևում են ուսուցչական և աշակերտական համակազմերը:


45	Կիրառված կարգապահական տույժերը և խրախուսանքները, դրանց հիմնավորվածությունը:			Ուսման մեջ բարձր առաջադիմության, ներդրողական և արտադրողական միջոցառումներին և դպրոցում իրականացվող այլ կամավորական աշխատանքների ակտիվ մասնակցության համար մի շարք աշակերտներ ստացել են գովասանագրեր, շնորհակալագրեր և պատվոգրեր: Կարգապահական տույժի ներկայացված աշակերտներ չենք ունեցել:
46	Ուսուցիչների աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, կենսաթոշակների նշանակման գործընթացի օրինականությունը:			Նշված աշխատանքները իրականացվել են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան:
47	Հանրակրթության բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:			Հայաստանի Հանրապետության՝ հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները կատարվում և վերահսկվում են:
48	Ուսումնական հաստատությունում վերջին երեք տարիներին իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները:			Կատարված վերահսկողությունը ցույց է տվել, որ դպրոցի ողջ անձնակազմը աշխատել է ըստ նախատեսված ծրագրերի, կատարվել են վարչական և ուսումնադաստիարակչական նախատեսված աշխատանքները, առկա են անհրաժեշտ փաստաթղթերը:

49	Ուսումնական հաստատությանը տրված հանձնարարականների կատարողականների առկայությունը:			Ուսումնական տարվա ընթացքում ԿԳՄՍ նախարարության կողմից դպրոցին տրված հանձնարարականները (արտադրողական և ներդրողական միջոցառումների, մրցույթների անցկացման մասին) կատարվել են նախատեսված ժամկետներում:
50	Ուսումնական հաստատությունում պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի առկայությունը, դրանց վարման կարգերի պահպանումը:			Առկա են պարտադիր գործածության բոլոր փաստաթղթերը, պահպանվում է դրանց վարման կարգը:




Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար


	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	2	2	2	անփոփոխ
2-րդ դասարան	1	2	2	անփոփոխ
3-րդ դասարան	1	1	2	աճ
4-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
5-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
6-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
7-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
8-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
9-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
10-րդ դասարան	2	2	1	նվազում
11-րդ դասարան	2	2	2	անփոփոխ
12-րդ դասարան	2	2	2	անփոփոխ
<b>ընդամենը</b>	<b>16</b>	<b>17</b>	<b>17</b>	<b>անփոփոխ</b>




### 2022-2023 ընկալում



### 2023-2024 ընկալում







Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	36	41	33	նվազում
2-րդ դասարան	19	40	42	աճ
3-րդ դասարան	14	20	40	աճ
4-րդ դասարան	13	15	26	աճ
5-րդ դասարան	19	17	21	աճ
6-րդ դասարան	20	21	19	նվազում
7-րդ դասարան	13	23	20	նվազում
8-րդ դասարան	17	14	28	աճ
9-րդ դասարան	13	20	14	նվազում
10-րդ դասարան	16	20	20	անփոփոխ
11-րդ դասարան	17	13	18	աճ
12-րդ դասարան	20	18	13	նվազում
<b>ընդամենը</b>	<b>217</b>	<b>262</b>	<b>294</b>	<b>աճ</b>



### 2021-2022 ուստարի



### 2022-2023 ուստարի



## 2023-2024 ուստարի



**Աղյուսակ 3.** Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝  
ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 14-ի դրությամբ:	202	256	284	աճ
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուս- տարվա հունիսի 9-ի դրությամբ:	217	262	294	աճ
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	23	18	24	աճ
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	8	12	14	աճ


**Աղյուսակ 4.** Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝  
ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	31	31	35	աճ
Ուսուցիչների միջին շաբա- թական բեռնվածությունը կամ դրույքաչափը	22	22	22	հաստատուն



**Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար**

	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	8	9	9	աճ
31-40 տարեկան	11	9	7	նվազում
41-50 տարեկան	4	7	10	աճ
51-55 տարեկան	4	1	1	նվազում
56 տարեկան և ավելի	4	5	8	աճ

Դպրոցում աշխատող ուսուցիչները հիմնականում մինչև 50 տարեկան կանայք են:



## 2023-2024 ուստարի





**Աղյուսակ 6 . Տվյալներ ուսումնական հաստատության  
ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ**

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտո- նում աշխա- տելու ժամանա- կահատվածը	Տվյալ հաստատու- թյունում աշխա- տելու ժամանակա- հատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Աննա Համլետի Ստեփանյան	4տ	16 տ	մանկ.գիտու- թյունների թեկնածու
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	Քրիստինե Կարմենի Ավագյան	4տ	10 տ	
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	Կարինե Համլետի Դուրգարյան	2տ.6 ամիս	2տ.6 ամիս	

Դպրոցի տնօրենությունը կուռ թիմ է, որի անդամները փորձառու մասնագետներ են: Մանկավարժական համակազմը աշխատում է արդյունավետ գործելով թիմային սկզբունքով, միասնաբար, փոխգործակցության և ըմբռնման մթնոլորտում: Տնօրենությունը վերահսկում է դպրոցի գործունեությունը և ապահովում որոշումների կատարումը: Դպրոցի աշխատանքին վերաբերող հարցերի լուծմանը ներգրավված են կրթական գործընթացի բոլոր մասնակիցները:

## Մաս 2. Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

«Երևակ» կրթահամալիրում բարձր հիմքերի վրա են դրված աշակերտների, ուսուցիչների և դպրոցի ողջ անձնակազմի առողջության պահպանման և ֆիզիկական ներդաշնակ զարգացման խնդիրները: Դպրոցը իր առջև խնդիր է դրել իրականացնել անվտանգ ուսումնական գործընթացը, աշակերտների հոգևոր ֆիզիկական և սոցիալական բարեկեցության ապահովումն ու զարգացումը: Դպրոցում և նրա շրջակայքում ստեղծված են անվտանգ միջավայր և անվտանգ պայմաններ աշակերտների, ուսուցիչների, վարչական և սպասարկող անձնակազմերի աշխատանքի, կյանքի և առողջության պահպանման համար:

### 2.1 Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործում:

1. Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ աշակերտների ազատ տեղաշարժման համար: Կա դպրոցի մուտքերի, բակի տեսահսկման համակարգ: Դպրոցի մուտքի մոտ առկա է անցակետ, և յուրաքանչյուր անձ ներս է մտնում անցագրով: Դասերի ընթացքում սահմանված է հերթապահություն:

2. Դպրոցն ունի միջմասնաշենքային տարածքներ, որոնք հեռացված են ավտոճանապարհային գոտուց և արդյունաբերական օբյեկտներից: Առավոտյան՝ ժամը 8.00-8.30, դպրոցի աշխատակիցները վերահսկում են աշակերտների մուտքը դպրոց:

3. Դպրոցն ունի բացվող մեծ դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին (հիմք՝ դպրոցի պլան-հատակագիծը):

4. Դպրոցի տարածքը մաքուր է: Աղբահանությունը կատարվում է տարանջատված: Աշակերտները աղբը թափում են հատուկ նշումով տարբերակված աղբարկղերում: Լաբորատորիայում վտանգավոր նյութեր չեն օգտագործվում, իսկ օգտագործվող այրվող և այլ նյութերի թափոնները կանոնավորապես հավաքվում են աղբարկղերում և դուրս բերվում դպրոցի տարածքից:

5. Պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների դեմ:

### 2.2. Անվտանգության նորմերի և առողջության պահպանման ծառայությունների կազմակերպում:

#### Դպրոցում՝

Առկա են	Առկա չեն
• դեպի դուրս բացվող ելուստային ելքեր	• ոչ կառուցվածքային վտանգներ
• կապի և արտակարգ իրավիճակների ազդարարաման համակարգ	• անիվներով տեղաշարժվող ծանր իրեր
• կրակմարիչներ	• կահույքի վրա տեղադրված ծաղկամաններ, նկարներ և ծանր իրեր
• համակարգչային սարքավորումներ, պրոյեկտորներ՝ ամուր տեղադրված և ամրացված աշխատատեղերին	• դպրոցական միջանցքների սայթաքուն հատակներ
• տարհանման պլան	
• նախասրահում, մասնաշենքերի նախամուտքերում փակցված տարհանման սխեմաներ՝ համապատասխան գունային սլաքներով	
• ամուր, բարվոք վիճակում, անվտանգ կենսագործունեության պահանջներին համապատասխան դպրոցական կահույք, ամրացված պահարաններ	

**2.3. Ուսումնական հաստատության նախագծային հզորությանը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ**

Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը մասամբ համապատասխանում է առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին (2մ<sup>2</sup>):

**Աղյուսակ 7. Տվյալներ դասասենյակում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ.**

Հ/հ	Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերես (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
1	2	3	4	5	6
1	111 /2.1/	35.4մ <sup>2</sup>	շարքերով	11սեղան, 22 աթոռ	50 սմ/20-30սմ
2	112 /3.2/	36.6 մ <sup>2</sup>	շարքերով	10սեղան, 20 աթոռ	50 սմ/20-30սմ
3	113 /1.1/	35,4 մ <sup>2</sup>	շարքերով	8 սեղան, 16 աթոռ	50 սմ/20-30սմ
4	117/ 1.2/	35,1 մ <sup>2</sup>	շարքերով	9սեղան, 18 աթոռ	50 սմ/20-30սմ
5	121 /10/	35.4մ <sup>2</sup>	շարքերով	10 սեղան, 20 աթոռ	50 սմ/20-30սմ
6	122 /11/	36.6 մ <sup>2</sup>	շարքերով	10սեղան, 20 աթոռ	50սմ/20-30սմ
7	123 /6/	34.5 մ <sup>2</sup>	շարքերով	10 սեղան, 20 աթոռ	50 սմ/20-30սմ
8	124 /7/	34.5 մ <sup>2</sup>	շարքերով	10 սեղան 20 աթոռ	50 սմ/20-30սմ
9	125 /4/	36.6 մ <sup>2</sup>	շարքերով	13սեղան, 26 աթոռ	50սմ/20-30սմ
10	126 /9/	33 մ <sup>2</sup>	շարքերով	7 սեղան, 14 աթոռ	50 սմ/20-30սմ
11	127 /8/	39.2 մ <sup>2</sup>	շարքերով	14 սեղան, 28 աթոռ	50 սմ/20-30սմ
12	212 / 2.2/	34.9 մ <sup>2</sup>	շարքերով	10 սեղան, 20 աթոռ	50 սմ/20-30սմ
13	213 /3.1/	35.7 մ <sup>2</sup>	շարքերով	10 սեղան, 20 աթոռ	50 սմ/20-30սմ
14	214 /5/	35.7 մ <sup>2</sup>	շարքերով	11 սեղան, 22 աթոռ	50 սմ/20-30սմ
15	216 /12/	20.5 մ <sup>2</sup>	շարքերով	7 սեղան, 14աթոռ	40 սմ/20-30սմ

Աշակերտական սեղանները նախատեսված են երկու աշակերտի համար: Շարքերով դասավորված նստարանները կամ աթոռները հարմար են անհատական և կոլեկտիվ աշխատանքի համար:

Փոխներգործուն մեթոդներով աշխատելիս ուսուցիչն առանց դժվարության փոխում է դասավորությունը և ստանում իր դասի մտահղացմանը հարմար աշխատատեղեր:

**Աղյուսակ 8.** Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ:

Հ/հ	Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)
1	111	35.4 մ <sup>2</sup>
2	112	36,6 մ <sup>2</sup>
3	113	35,4 մ <sup>2</sup>
4	117	35,1 մ <sup>2</sup>
5	121	35.4մ <sup>2</sup>
6	122	36.6 մ <sup>2</sup>
7	123	34.5 մ <sup>2</sup>
8	124	34.5 մ <sup>2</sup>
9	125	36.6 մ <sup>2</sup>
10	126	33 մ <sup>2</sup>
11	127	39.2 մ <sup>2</sup>
11	212	34.9 մ <sup>2</sup>
12	213	35.7 մ <sup>2</sup>
13	214	35.7 մ <sup>2</sup>
14	216	20.5 մ <sup>2</sup>

Բոլոր դասարաններում կա 4 լուսամուտ: Բնական լույսն ընկնում է ձախ կողմից: Դասասենյակները օդափոխվում են ամեն դասից հետո (ջեռուցման ամիսներին դպրոցում ապահովված է անհրաժեշտ ջերմաստիճան):

Բոլոր գրատախտակները մագնիսամարկերային են: Դասարաններում առկա են նոթբուքեր և պրոյեկտորներ: Աշակերտներն ու ուսուցիչները գրատախտակից օգտվում են անհատական մարկերներով:

**2.4 Ուսումնական հաստատության անձնակազմի սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ:**

Դպրոցն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են աշակերտների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությանների ձևավորմանը:

- Դպրոցի անձնակազմը և աշակերտները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործող նորմերին և կանոններին:
- Կրթահամալիրում առկա են տարիանման պլան, ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեմա, տարածքի սխեմատիկ պատկերներ, շենքի հատակագծեր՝ ըստ հարկայնության:
- Ծանոթ են աղետների ստանդարտ գործողությունների ընթացակարգին, պաշտպանական պարզագույն ապաստարանների և անվտանգ պարզագույն թաքստոցների տարածքներին:

- Դպրոցում առկա է ԱՌԿ (աղետների ռիսկերի կառավարման) պլան, ՔՊ (քաղաքացիական պաշտպանության) պլան, աղետների ռիսկի նվազեցման պլան ժամանակացույց: Ուսումնական տարվա ընթացքում գործարկվել է ՔՊ (քաղաքացիական պաշտպանության) պլանը և աղետների ռիսկի նվազեցման պլան ժամանակացույցը, իրականացվել են վարժանքներ համապատասխան աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլան ժամանակացույցի, որը վերահսկվել է կրթահամալիրի ԱՌԿ խորհրդի կողմից:

- Պարբերաբար իրականացվում են ԱՌԿ խորհրդի նիստեր, տարահանման պլաններին և տարահանման պայմանական նշաններին անձնակազմի և աշակերտների ծանոթացում, անձնակազմին և աշակերտներին վարքականոնների ուսուցում, կատարվել է ուսումնական վարժանք «Ուժեղ երկրաշարժի դեպքում անձնակազմի և աշակերտների պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

- Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով:
- Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին, դպրոցի միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:
- Դպրոցի բոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար:
- Դպրոցի բոլոր սանհանգույցները ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով:
- Դպրոցում առկա է ճաշարան, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին, աշակերտները սնվում են տաք սննդով:
- Դպրոցում առկա է բուժկետ, ուր տրամադրվում է առաջին բուժօգնություն:

**Աղյուսակ 9. Տվյալներ արտակարգ իրավիճակներում հաստատության անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին:**

	<b>Չափանիշը</b>	<b>Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին: Արձանագրել իրավիճակը</b>
1	Դպրոցի աշխատակազմը և աշակերտները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:	Ոլորտային պատասխանատուները, ոլորտային խմբերում ներգրավված անդամները, անձնակազմը և աշակերտները տիրապետում են տեսական ու գործնական գիտելիքներին և աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման ու իրականացման աշխատանքներում կարողանում են կիրառել դրանք: Ոլորտի պատասխանատուները ծանոթ է կրակմարիչների օգտագործման կանոններին, պահուստային էլքերին, տարահանման պլաններին, արտակարգ իրավիճակների ժամանակ վարվելակերպի կանոններին, տարահանման պատասխարման և հրդեհային անվտանգության կանոններին, կրթահամալիրի թաքստոցներին և ապաստարանի գտնվելու տարածքներին, պատրաստ է օգնել նման իրավիճակներում նաև փոքրերին և տուժածներին:

2	<p>Դպրոցի աշխատակազմը և աշակերտները տեղեկացված են դպրոցում առկա միջոցների տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին:</p>	<p>Դպրոցի անձնակազմը, հրշեջ փրկարարական խումբը կարող են օգտվել կրակմարիչներից, հոգեբանը, բուժքույրը և նախօրոք պատրաստված աշակերտները, աշակերտական խորհրդի կազմում ընդգրկված նախաձեռնող աշակերտները, ծնողական խորհրդի կազմում ընդգրկված մի շարք ծնողներ տիրապետում են թե տարահանման, թե որոնողական, թե փրկարարական աշխատանքների նրբություններին, Ոլորտի պատասխանատուները կարողանում են ապահովել անձնակազմի և աշակերտների պաշտպանությանն ուղղված համակարգերի և սարքավորումների արդյունավետ և անխափան աշխատանքը, անվտանգության վարքականոնների և պարտականությունների մշակումը և դրանց կիրառումը՝ արտակարգ իրավիճակներում, կազմակերպել և իրականացնել արտակարգ իրավիճակներում անձնակազմի և աշակերտների պատասպարում, տարահանում և անհատական պաշտպանության միջոցներով ապահովում, ինչպես նաև օժանդակել որոնողափրկարարական ստորաբաժանումներին՝ մարդկանց կյանքի փրկության և առողջության պահպանման հարցերում և կազմակերպել արտակարգ իրավիճակներում տուժածներին առաջին օգնության և հոգեբանական առաջին օգնության տրամադրումը, իսկ պարբերաբար իրականացվող գործնական պարապմունքների միջոցով ապահովել առաջին օգնության և հոգեբանական առաջին օգնության պատրաստվածության բարձր մակարդակը և գործողությունների փոխկապակցվածությունը:</p>
---	--	---

Ուսումնական տարվա ընթացքում գործարկվել է ԱՌԿ պլանը, որը վերահսկվել է կրթահամալիրի ԱՌԿ խորհրդի կողմից, իրականացվել են վարժանքներ համապատասխան աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլանի նախատեսված ժամանակացույցի:

Գործընթացին մասնակից են եղել մանկավարժական և աշակերտական համակազմը, բուժքույրը, հոգեբանը, աշակերտական և ծնողական խորհուրդները, ծնողական համայնքը:

Կրթահամալիրի անձնակազմն ու աշակերտներն իրազեկվել են տարահանման պլաններին և տարահանման պայմանական նշաններին, կատարվել է անձնակազմի և աշակերտների վարքականոնների ուսուցում համապատասխան տեսանյութերի և տեսասահիկների միջոցով, իսկ տարրական դպրոցում և մանկապարտեզում համապատասխան մուլտֆիլմերի միջոցով, իրականացվել է ուսումնական վարժանք «Ուժեղ երկրաշարժի դեպքում անձնակազմի և աշակերտների պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով, ակտիվ համագործակցել ենք ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության բաժնի հետ:

Գործընթացում ներգրավվել են նաև ծնողներ, աշակերտներին ու ներկա ծնողներին հորդորել ենք բացատրական աշխատանքներ կատարել նաև իրենց բնակավայրերում, ինչը անշուշտ, կնվազեցնի աղետների թույլ տված վնասի չափը:

**Աղյուսակ 10.** Տվյալներ տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ դպրոցում իրականացվող միջոցառումների վերաբերյալ:

Ամսաթիվը	Դասարանը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերն ու պարագաները	Մասնակիցների թիվը
22.09.2023թ.	3-4	Մեր անվտանգությունը դպրոցում, քաղաքում և տանը	65
20.10.2023թ.	1-12	Ինչպես դիմակայել աղետներին	270
06.12.2023թ.	1-12	Երկրաշարժը և նրա հետևանքները	280
28.02.2024թ	1-4	Բնական աղետներ. Հրդեհների ժամանակ մեր գործողությունները	140
21.03.2024թ	1-12	Ինչ անել օդային տագնապի ժամանակ	245

Տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ դպրոցում իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ՝ վարժանքներ, զրույցներ, դասախոսություններ: Ըստ ԱՌԿ պլանի «Անձնակազմի և աշակերտների գործողությունները երկրաշարժի դեպքում» թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն է իրականացվել հունիսի 10-ին նպատակ ունենալով կատարելագործել կրթահամալիրի կազմավորումների գործնական հմտությունները երկրաշարժի դեպքում, ստուգել կազմավորումների պատրաստվածությունը ստեղծված իրավիճակում իրենց առջև դրված խնդիրների կատարման ուղղությամբ:

Դպրոցում առկա է քաղաքացիական պաշտպանության պլան, որը հաճախ վերլուծության է ենթարկվում, նկարագրվում վարժանքների ժամանակ թույլ տրված սխալները:

**Աղյուսակ 11.** Տվյալներ ուսումնական հաստատության շենքի ջեռուցման պայմանների մասին:

Դիտարկման ամսաթիվ՝ 20.11.2023, 18.12.2023, 10.01.2024-17.01.2024, 12.02.2024-

16.02.2024:

Ուսումնական հաստատությունն ապահովված է լրկալ ջեռուցման համակարգով Այլ			
Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը
Դասասենյակ 111	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
Դասասենյակ 112	Կենտրոնացված	21°	Շուրջօրյա
Դասասենյակ 113	Կենտրոնացված	21°	Շուրջօրյա
Դասասենյակ 117	Կենտրոնացված	21°	Շուրջօրյա
Դասասենյակ 121	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
Դասասենյակ 122	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 123	Կենտրոնացված	21°	Շուրջօրյա
Դասասենյակ 124	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
Դասասենյակ 125	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 126	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 127	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 213	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 214	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 215	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
Դասասենյակ 217	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
Մարզադահլիճ	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
Միջոցառումների դահլիճ	Կենտրոնացված	21°	Շուրջօրյա
Ոսուցչանոց	Կենտրոնացված	21°	Շուրջօրյա
Ճաշարան	Կենտրոնացված	22°	Շուրջօրյա
1-ին հարկի միջանցքներ	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
2-րդ հարկի միջանցքներ	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա
Սանհանգույցներ	Կենտրոնացված	20°	Շուրջօրյա

1. Դպրոցը լոկալ ջեռուցման անվտանգ համակարգ ունի:

2. Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին: Այդ ցուցանիշը մշտապես ստուգվում է դպրոցի բուժաշխատողի կողմից:

3. Դպրոցի միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում նույնպես ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին: Հատկապես ձմեռային ամիսներին ջերմաստիճանը պարբերաբար ստուգվում է դպրոցի բուժքրոջ կողմից:

**Աղյուսակ 12.** Տվյալներ ուսումնական հաստատության ջրամատակարարման, սանհանգույցի առկայության և դրանց վիճակի վերաբերյալ

Հաստատության ջրամատակարարումը		
Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով	Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչ շուրջօրյա	Ապահովված չէ հոսող խմելու ջրով
Ապահովված է	-	-

**4. Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը.**

Շենքի հարկը	Սանհանգույցների թիվը	Աղջիկների սանհանգույցի առկայությունը	Տղաների սանհանգույցի առկայությանը	Հիգիենայի պարագաների առկայությունը	Հարմարեցվածությունը հաշմանդամության ունեցող անձանց կարիքներին	Վերանորոգված են, թե ոչ
1ին հարկ	6	4	2	այո	այո	
2-րդ հարկ	2	-	2	այո	այո	

1. Դպրոցն ապահովված է շուրջօրյա խմելու հոսող ջրով:

2. Դպրոցի երկու մասնաշենքերի հարկերում առկա են առանձնացված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար: Սանհանգույցները վերանորոգված են:

3. Դպրոցի բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով: Բուժքրոջ կողմից իրականացվում է մշտադիտարկում:

**Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության վերաբերյալ:**

**Աղյուսակ 13.** Դպրոցում գործում է ճաշարան, որը աշխատում է ժամը 8<sup>00</sup>- 17<sup>00</sup>-ը, ապահովում աշակերտների և աշխատակազմի սննդի կազմակերպման հարցը: Սննդի կետը հագեցված է անհրաժեշտ գույքով և խոհանոցային պարագաներով: Տրվում է տաք սնունդ:

Դպրոցի սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության					
Սննդի կետի տեսակը	Միաժամանակ սնվելու հնարավորության ունեցող անձանց թիվը և տարածքը	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը	Տաք սննդի հնարավորությունը	Վերանորոգված է, թե ոչ
ճաշարան	60 մարդ, 150 մ <sup>2</sup>	առկա է	առկա է	տրվում է	վերանորոգված է



**Աղյուսակ 14. Տվյալներ ուսումնական հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ**

Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ:	
Այո	-

Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը	Բուժաշխատողների թիվը և նրանց պաշտոնները	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ	Սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
I հարկ, մակերեսը՝ 20,5 մ <sup>2</sup>	Բուժքույր - 1	1 տապչան, 2 պատգարակ, 1 հասակաչափ, 1 կշեռք, 1 դեղորայքի պահարան, 1 պահարան երեխաների բժշկական գործերի համար, 1 սեղան, 2 աթոռ, 1 լվացարան	վերանորոգված	լավ	Առկա են առաջին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներն ու դեղորայքը:

Դպրոցն ունի բուժաշխատող և անհրաժեշտ դեպքերում բժշկական առաջին օգնություն է ցուցաբերում աշակերտներին և ուսուցիչներին, գնահատում երեխաների առողջական վիճակը, որոշում բուժկետ դիմած երեխայի՝ մինչև դասերի վերջը դպրոցում մնալու նպատակահարմարությունը, ինչպես նաև վարակիչ հիվանդություններ տարած երեխաների առողջական վիճակին, ուսուցիչների առողջությանը, դպրոցի տարբեր տարածքների սանիտարական վիճակին հետևում է բուժքույրը: Վարում է աշակերտների առողջության վերաբերյալ փաստաթղթերը: Ողջ ուսումնական տարվա ընթացքում բուժքույրը հետևել է դպրոցի ամենօրյա ախտահանման գործընթացին: Բուժկետը գործում է աշխատանքային ողջ օրվա ընթացքում:

**2.5. Սոցիալական առողջության չափանիշներ**

Դպրոցում առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջությանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակային կազմակերպմանը: Աշակերտական և դասարանական խորհուրդների հետ մանրամասն քննարկվել են՝ երեխայի իրավունքների մասին և հաշմանդամության ունեցող երեխաների մասին ՄԱԿ-ի կոնվենցիաները, ինչպես նաև ՀՀ համապատասխան օրենքները՝ ներառյալ ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենքներն ու իրավական ակտերը, ուսումնական հաստատության կանոնադրությունը և այլն:

- Դպրոցում իրականացվել են ծրագրեր, որոնք ուղղված են ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերի կանխարգելմանը ուղղված միջոցառումներին:
- Իրականացվել են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի արգելման կամ դրանց բացահայտման աշխատանքներ:

- Գործել են աշակերտների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ, բուլինգի երևույթներ չեն գրանցվել:

- Իրականացվել է երեխայի խնամքի և դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ:

- Դպրոցում կազմակերպվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ դրանց փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու համար:

- Մանկավարժները ստեղծել են ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպել բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումների դեմ ուղղված գրույցներ և միջոցառումներ:

**Աղյուսակ 15.** Տվյալներ դպրոցի աշակերտների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ.

